

**Մարզպետ Աշոտ Սիմոնյանն Արագածի և Ապարանի տարածաշրջաններում հանդիպեց  
դպրոցների տնօրենների և համայնքների ղեկավարների հետ**

Հունիսի 19-ին Արագածոտնի մարզպետ Աշոտ Սիմոնյանն այցելեց Արագածի և Ապարանի տարածաշրջաններ: Արագածի տարածաշրջանում մարզպետը խորհրդակցություն անցկացրեց Ալազյազի միջնակարգ դպրոցում, որին ներկա էին դպրոցների տնօրենները և խոշորացված համայնքներ Ծաղկահովիտի և Ալազյազի համայնքապետերը, իսկ Ապարանում դպրոցների տնօրենների մասնակցությամբ խորհրդակցությունը կայացավ թիվ 2 դպրոցում:

Աշոտ Սիմոնյանն անդրադարձավ 2017-2018 ուսումնական տարվա ընդհանուր նկարագրին՝ նշելով որ դեռևս 10 ամիս առաջ իր կողմից բարձրացված բոլոր խնդիրներն արդիական են, և բոլոր հանձնարարականներն ուժի մեջ են:

Քննարկվեցին կրթության բարելավմանը միտված մի շարք խնդիրներ: Մասնավորապես անդրադարձ կատարվեց տարիֆիկացիաների կազմմանը, դպրոցների բյուջեներին, շենքային պայմաններին, ջեռուցման գործընթացին առնչվող խնդիրներին, ինչպես նաև կրթական, կազմակերպչական այլ հարցերի:

Տնօրենները մարզպետին դիմեցին իրենց մտահոգող մի շարք հարցերով և ստացան սպառիչ պատասխաններ:

Աշոտ Սիմոնյանը նաև շրջայց կատարեց Ալազյազի և Ապարանի թիվ 2 դպրոցներում, ծանոթացավ այստեղ առկա խնդիրներին և դրանց համատեղ լուծման համար երաշխիքներ տվեց: